ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Անի Բալյան, Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթների համակարգող խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Թաիլանդի թագավորություն, ք. Բանգկոկ, 2023 թվականի հունիսի 20-ից մինչև 24-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝ Ասիական զարգացման բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել «Climate and Disaster Risk - Informed Investments/Կլիմայից և աղետներից բխող ռիսկեր՝ հիմնավորված ներդրումներ» թեմայով տարածաշրջանային աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները՝

1. Կլիմայից և աղետներից բխող ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության կարևորությունը ներդրումային որոշումներ կայացնելու գործընթացներում,
2. Կլիմայից և աղետներից բխող ռիսկերի զննման/գնահատման համար անհրաժեշտ գործիքակազմեր,
3. Կլիմայից և աղետներից բխող ռիսկերի պայմաններում պետական և մասնավոր հատվածում իրականացվող ներդրումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովի ընթացքում փորձագետների կողմից ներկայացվել են շնորհանդեսներ, հնչել են ելույթներ և տեղի են ունեցել պանելային քննարկումներ, իսկ մասնակիցներին տրվել է հարց ու պատասխանի հնարավորություն: Հանդիպումների վերջում երկրների ներկայացուցիչները ըստ տարածաշրջանի բաժանվել են խմբերի, և իրականացվել է խմբային աշխատանք, որտեղ յուրաքանչյուր խումբ ներկայացրել է կլիմայից և աղետներից բխող ռիսկերին առնչվող տարածաշրջանում առկա խնդիրները և առաջարկվող լուծումները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքներն օգտակար կլինեն ներդրումային որոշումներ կայացնելու գործընթացներում հաշվի առնել կլիմայից և աղետներից բխող ռիսկերի բացահայտման և կառավարման համար՝ օգտագործելով ռիսկերի բացահայտման և գնահատման համար ներկայացված գործիքակազմերը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

28.06.2023